

նայ արտասահմանէն։ Հոփիսիմէ երբ կը լսէ որ Թաշճեան ու-
րիշ գործով կը պարապի, շատ կը զարմանայ. «Գեղարուեսաթ
երկրպագուն, նա որ մի ժամանակ վրձինը չէր թողնում ձեռ-
քից, որի ստեղծագործութեան մէջ էր ամփոփուած իր ամբողջ
աշխարհը, ձգել է վրձինը»...

Ու Հոփիսիմէի «անակնկալ երևալը», անոր «կշտամբան-
քը» և խոռով եղրօր՝ Վահանի վերադարձի լուրը այն աստիճան
խորապէս կը յուզեն, կը վրդովեն ու նաև կ'ովեորեն նկարիչը,
որ ցնցումին չըմանալով սրտի պայթումէ մը կը մեռնի.

Պ. Մանուէլեան կը թուի թէ աւելի լաւ ըրած պիտի ըլլար,
ձգելով՝ որ իր հերոսը առանց այդ օտարութի միջամտութեան
մեռնի։ Թաշճեանի համար ուրիշներու դատաստանը, կարծիքը
աւելի ծանրակշիռ չպիտի ըլլար, քան իր ներքին համոզումը,
այն ցաւատանց գիտակցութիւնը թէ ինք գեղարուեսաթի համար
այլևս կորած է։ Միթէ Հոփիսիմէի մը հաստատութեան պէտք
ունէր զգալու համար որ դրժած է իր կոչումին։

ՏԻԴՐԱՆ

ԽՄԲԱԳԻՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Շարունակում է «Մուրճ»-ի 1904 թ.-ի բաժանորդա-
գրութիւնը՝ նոր գրուղիները կը ստանան յունուարից լոյս տե-
սած բոլոր համարները։ Հարկ ենք համարում յիշեցնելու, որ
յաջորդ համարը (№ 6) կ'ուղարկուի միմիայն այն բաժանորդ-
ներին, որոնք լրացրած կը լինեն մաս-մաս վճարուող բաժա-
նորդադինը։

Բագուից, գետաշէնցի պ. պ. Ա. Մուաէլեանց (1 ր.
50 կ.), Խ. Գաբրիէլեանց (1 ր. 65 կ.), Ա. Այանեանց
(1 ր.), Մ. Քեռթանչեանց (1 ր.), Գ. Մէժիեանց (1 ր.),
Ա. Զարդարեանց (1 ր.), Առ. Զալալեանց (1 ր.), Ալ.
Զալաւեանց (1 ր.), Յ. Եղեանց (50 կ.), և Ս. Զիլին-
գարեանց (50 կ.) իրանց գիւղի համայնքի համար հա-
ւաքել են ներկայ տարուայ «Մուրճ» ամսագրի մի բա-
ժանորդագին։ Յիշեալ համայնքին ուղարկուած են լոյս
տեսած համարները։

Պ Ա Տ Ա Մ Խ Ա Ն Ն Ե Ր

ԿԱՐԱԿՈՒՐՏ (Բաշ-Բեոյ), Ա. Մ.—Զի տպուելու։

ՆՈՐ-ԶՈՒՂԱ, Տ. Ա.—Սպասում ենք մեր նամակի պատասխանին։